ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՐՍԱՆԵԱՑ

(Աշուղ Ցարթուն օղլու անտիպ երգերից)

□ ○ □

Արարիչ աստուածութիւնն,
Թագաւորի արևն օրհնէ.
Երեք անձ և մի բնութիւնն,
Նոր թագուհու կեանքն օրհնէ։

Բարձր աստիճան Մարեամ կոյսն,
Որ պարգևեց անճառ լոյսն.
Փրկիչն աշխարհի Յիսուսն,
Բազմականաց արևն օրհնէ։

Գաբրիէլ հրեշտակապետն,
Որ ունէր հրեղէն նետն.
Միքայէլ ինքը դաս հետն,
Այս տան օթևանն օրհնէ։

Դաս անմարմնոց սրբարէնքն,
Ին խաչաձև քերովբէքն.
Եւ վեցթևեան սերովբէքն,
Թագաւորի կեանքն օրհնէ։

Երանելի Եղիայ Ենովք,
Համբարձման լուսեղէն կառովք.
Զայնիւ երգէր նոյն բարբառովք,
Նոր թագուհու կեանքն օրհնէ։

Զոր ստեղծ Աստուած Ադամ ձեռօք,
Զարդարեց լուսեղէն փառօք.
Նոյ նահապետ ձայն բարբառօք,
Այս խաչ եղբօր կեանքն օրհնէ։

Ին հայր Աբրամայ կուռքն կողով,
Սահակ որդին և սուրբն Յակովբ.
Համբերող երանելի Յովբ,
Հրաւիրելոց արևն օրհնէ։

Ըսկիզբն Մովսէս մարգարէն,
Հրաման առաւ Բարերարէն.
Պատգամ բերեց Սինա սարէն,
Թագաւորի արևն օրհնէ։

Թագաւոր բարի սրբարէն,
Տէր Մելիքսէթ Ահարոն.
Դպիկեալ գաւազան բուրվառովն,
Նոր թագուհու կեանքն օրհնէ։

Յոզով մարգարէաց դասին,
Որ Քրիստոսայ գալուստն ասին.
Քսնան և չո(ր)քն էլ միասին,
Քահանայից կարգն օրհնէ։

Ի Զաքարիայ այնմ յետն,
Մեծածնունդ Եղիսապետն.
Սուրբ Յովհաննէս Կարապետն,
Ձեր ամենի կեանքն օրհնէ։

Լուսաթաթախ Ստեփաննոսն,
Առաջին սուրբ մարտիրոսն.
Մեր ստեղծող Քրիստոսն,
Թագաւորի կեանքն օրհնէ։

Խաչն երևման կենարարն,
Որ Քրիստոսայ չարչարանքն.
Մելգոն, Գասպար, Բաղդասարն,
Նոր թագուհու կեանքն օրհնէ։

Ղերունի սուրբ Սիմէոնն,
Որ բնակեալ էր այն սուրբ տանն.
Զորս գլուխ աւետարանն,
Բազմականաց կեանքն օրհնէ։

Կաթուղիկէ Պետրոս, Պօղոս,
Թովմաս, Անդրէաս, Բարթուղմէոս,
Օհան, Շմաւոն, Թադէոս,
Այս տան օթևանն օրհնէ։

Հայրապետաց սրբոց դասուն,
Տասն ութն և երեսուն.
Այն սուրբ կուսանքն գառաստուն,
Թագաւորի կեանքն օրհնէ։

Ձեր բարեպաշտ Աբգարիոս,
Մեր թագաւոր Կոստանդիանոս.
Սուրբ Տրդատ և Տիմոթէոս,
Նոր թագուհու արևն օրհնէ։

Ղամբարափայլ վառեալ լուսոյն,
Երեք մանկունքն գառաստուն.
Աշակերտք եօթանասուն,
Ձեր ամենի կեանքն օրհնէ։

Ճգնաւոր հայր Անտոն Պօղոս,
Պօղոս, Մակարա Ալեքսանդրոս.
Աբբայ, Մարկոս, Սրապիոն Նեղոս,
Ճամիաթի արևն օրհնէ։

Մեսրովբ, Գրիգոր Նարեկացին,
Ներսէս, Օհան Որոտնեցին,
Սահակ, Մովսէս Տաթևացին,
Թագաւորի կեանքն օրհնէ։

digitised by A.R.A.R.@

Ցամենայն հայոց սրբազան,
Լուսաւորչա տեղն իջման.
Երուսաղէմ լոյս գերեզման,
Նոր Թագուհու կեանքն օրհնէ։

Նոյն իջման տեղի սուրբ տունն,
Սուրբ մեռոնայ օրհնութիւնն.
Աւազան մկրտութիւնն,
Քահանայից կեանքն օրհնէ։

Շատ մեղապարտ Ցարթուն օղլուս,
Դու ողորմաս տէր իմ Յիսուս.
Խնդրեմ աղաչանքն առնուս,
Ձեր ամենու կեանքն օրհնէ։

(«Պարսկահայ Աշուղներ» անտիպ գրքից)

Ա. Ե.

Վասն հարսի մնա բարեւ անելու
և օրհնանք խնդրելու[1] . . .

Եկայք առ իս հայր և մայր իմ,
Բան մի ասեմ քոյր եղբայր իմ.
Եկեալ է սիրելի այր իմ,
Մնաք բարեաւ, ես գնացի . . .

Հայր ինձ հասուցեալ ես հասակ,
Մատիր օրհնեայ իմ սուրբ պըսակ.
Ունիս վերչս դու շատ վաստակ,
Հալալ արա, ես գնացի . . .

Մայր իմ կըրեալ ես վասն իմ աշխատ,
Տիւ և գիշեր անքուն և շատ.
Եթէ տեսեալ ես ինձնէ վատ,
Դու յիս ներեա, ես գնացի . . .

Մի՛ լալ մայր իմ մի՛ հեկեկալ,
Բազում փեսայ յիս է եկեալ.
Հրաման Տեառն է ոչ կարեմ կեալ,
Դու համբերեա, ես գնացի . . .

Արի տեսնեմ նազելի քոյր.
Տացուք միմիեանց բարի համ[մ]բոյր.
Ընդէր լինիս վասն իմ տըխոյր.
Արի պարեա, ես գնացի...

Խընդըրեմ ի ժէնջ իմ ազգականք.
Ցոյժ սիրելիք և պատ[ուա]կանք.
Սըրտէ ի սիրտ տուք ինձ օրհնանք
Այսմը օրեա[յ] ես գնացի . . .

Խընդրեմ ի քէն ազնիւ եղբայր.
Եկ և գնայ մի մոռանայր . . .
Զինչ հըրամա[յ]են հայր մեր և մայր
Դու կատարեա, ես գնացի . . .

Ցուժ նազելի հարս մեր օիրոյ,
Ուրախ խընդաս ընդ առն քո.
Դուք վա[յ]ելէք տուն հօր իմոյ
Հարիւր տարեա, ես գնացի . . .

Քեզ աղաչեմ տէր իմ արքայ.
Զարն ի միջոյ մերմէ հեռքեա.
Ցարթին օղլուս ասէք երգեայ
Երգն նորա, ես գնացի։

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ՊԱՐԱՊՄԱՆՑ ԳՐՈՑ ԼՈՒԾՄԱՆ ՄԷՋ

Գր. Տաթեւացւոյն սոյն աշխատութիւնը տպուած է Կիւրղի Պարապմանց գրքին հետ (տպ. Պոլիս 1717, *էջ* 529–790)*։ Հայկազեան բառարանը թէեւ գործածած է այս գիրքը (հմմտ, մէտերև բառը), բայց ամենևին ձեռք դպցուցած չէ Տաթեւացւոյն Լուծման, նոյնը կրկնած են նաեւ Առձեռնի աշխատասիրողները։ Ահա այս պատճառով է որ* 260 *երեսնոց համեմատաբար փոքր աշխատութեան մէջ կը գտնեմ* 41 *նոր բառ, որ կը հաւաքեմ ստորեւ։*

Այլաբերաբար «անուղղակի կերպով՝ ուրիշին վրայ կատարուած բան մը իր վրայ առնելով». բառս այս՝ որ ասէ՝ «համարեալ», կրկին ունի տեսութիւնս.

---

1. *Պ. Արամ Երեմեանէ ստացանք Ցարթուն օղլիի այս քերթուածին անտիպ ընագիրը՝ երկիջեայ թուղթի մը վրայ, զոր կը հրատարակենք հոս ըստ իւր գիտաւորութեան։*

ԽՄԲ.

digitised by A.R.A.R.@